

Հայերը սուրբ պատարագը հռոմէական սուրբ եկեղեցւոյ ծէսով չեն կատարեր. նախ նշխարքը կը ուր եւ սպիտակ է. զայն կը պատրաստէ պատարագիչ քահանան պատարագէն օր մը յառաջ. մատնաչափ թանձրութիւն ունի. երբ կը վերաբերէ քահանան Ս. Խորհուրդը՝ նշխարը կը հանգչի մաղղմայի վրայ եւ կը վերընծայէ մաղղմայով: Գինւոյ մէջ ջուր չի խառնուիր. այլ պարզապէս առնապակ դինի կը պաշտուի: Երբ 'Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեան, (Dominus vobiscum) կ'ըսէ, դէմքը ժողովրդեան չի դարձներ պատարագիչը, այլ դէմքը խորանին եւ կոնակը ժողովրդեան այնպէս օրհնութիւն կու տայ: Պատարագի արարողութիւնները ասոնք են:

Այս Դաւիթ կաթողիկոսը 25 կամ 26 եպիսկոպոսներու եւ 300 քահանաներու ներկայութեան ընդհանուր ժողով մը գումարեց Սպահանի պորտուգալցի Աւգոստինեանց եկեղեցւոյն մէջ. եւ համախորհուրդ որոշուեցաւ որ Զեր Սրբութեան նամակ գրուի, որպէս զի այս կողմերը Հռոմէական ծէսով նշանաւոր եւ հոգեւրից անձեր ուղարկէք. կ'ուզեն հպատակիլ Ս. Եկեղեցւոյ եւ յօժար են ընդունիլ եւ կատարել այն ամէն հրամանները, զորոնք Հռոմէական Ս. Եկեղեցին կը սահմանէ եւ կը պատուիրէ աստուածածային պաշտամանց համար:

Այս Դաւիթ կաթողիկոսը 4 կամ 5 քահանաներու հետ ի միասին կը բնակի. շատ